

Լ.Տ. ՏԱՐԳՅԱՆ

**АНАЛИЗ ФИНАНСОВОЙ СТАБИЛЬНОСТИ ПРЕДПРИЯТИЯ НА
ПРИМЕРЕ ООО «СВЕТ-ТЕКС»**

Инвестиционная привлекательность – один из наиболее значимых аспектов, интересующих как организацию, так и экономику страны в целом. Результатом проведенного исследования стал вывод о том, что центральным звеном инвестиционной привлекательности предприятия является ее финансовое положение и финансовая стабильность, поэтому наиболее часто применимым методом их оценки является расчет финансовых показателей.

Ключевые слова: финансовая привлекательность, финансовая стабильность, ликвидность, платежеспособность, финансовая зависимость, финансовая автономность, финансовый рычаг.

L.S. SARGSYAN

**ANALYSIS OF FINANCIAL STABILITY OF AN ENTERPRISE ON THE
EXAMPLE OF «SVET-TEX» LLC**

Investment attractiveness is one of the most significant aspects that interest both the organization and the economy of the country as a whole. The result of the study is the conclusion that the central point of the investment attractiveness of the corporation is its financial attractiveness and financial stability, so the most commonly used method for its evaluation is the calculation of financial indicators.

Keywords: financial attractiveness, financial stability, liquidity, solvency, financial dependence, financial autonomy, financial leverage.

ՀՏԴ 330.1

Ա.Ռ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, Ա.Ռ. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ, Ն.Կ. ՄԱՆԱՍՅԱՆ

**ՇՐՋԱՆԱԶԵՎ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՆԱԶ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՆԵՐԴՐՄԱՆ
ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ
(Գյումրի)**

Շրջանաձև տնտեսությունը հանդիսանում է կանաչ տեխնոլոգիաների ներդրման կարևորագույն գործիք, որն ուղղված է ռեսուրսների բազմակի օգտագործմանը և թափոնների կրճատմանը: Որպես փակ համակարգ՝ շրջանաձև տնտեսությունը կիրառում է վերամշակման սկզբունքը՝ օպտիմալացնելով բնական ռեսուրսների օգտագործումը: Կանաչ տեխնոլոգիաների ներդրումը նպաստում է ոչ միայն էկոհամակարգերի պահպանմանը, այլև նոր աշխատատեղերի ստեղծմանը և կյանքի որակի բարելավմանը: Աշխատանքում

ուսումնասիրվում է ձեռնարկատիրական գործունեության հիմնական նպատակի՝ շահույթի ստացման, ռեսուրսների խնայման և շրջակա միջավայրի պահպանման միջև հակասությունների լուծման հայեցակարգային տարբերակը: Առաջարկվում է Հայաստանում ներդնել կանաչ բիզնես մոդելներ, որոնք հիմնված են շրջանաձև տնտեսության գաղափարի վրա: Կանաչ բիզնես մոդելների կիրառումը կնպաստի ինչպես տնտեսական աճին, այնպես էլ՝ էկոլոգիական կայունության ապահովմանը՝ ստեղծելով նոր հնարավորություններ ձեռնարկությունների համար:

Առանցքային բառեր. շրջանաձև տնտեսություն, կանաչ տեխնոլոգիաներ, օպտիմալացում, մարտահրավերներ, հնարավորություններ, ծախսերի կրճատում:

Ներածություն: Կանաչ տնտեսությունը դարձել է կարևորագույն ուղղություն ինչպես գիտության, այնպես էլ քաղաքականության մեջ՝ պայմանավորված էկոլոգիական խնդիրների աճով և կայուն զարգացման անհրաժեշտությամբ: Բնական ռեսուրսների սպառման և բնապահպանական իրավիճակի վատթարացման համատեքստում հատկապես անհրաժեշտ է դառնում կանաչ տեխնոլոգիաներին անցնելու անհրաժեշտությունը: Այս ոլորտում նորարարությունները ոչ միայն օգնում են՝ մեղմելու բնապահպանական խնդիրները, այլև բացում են նոր տնտեսական հնարավորություններ: Շրջանաձև տնտեսության ուսումնասիրության արդիականությունը պայմանավորված է տնտեսության կայուն զարգացման նկատմամբ աճող հետաքրքրությամբ, որի արդյունքում կանաչ տեխնոլոգիաները դառնում են կայուն ապագայի հասնելու ռազմավարության հիմնական բաղադրիչը [1, 2]:

Կանաչ տեխնոլոգիաների ներդրման հիմնական նպատակն է ստեղծել կայուն լուծումներ, որոնք նվազագույնի են հասցնելու շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունը՝ նպաստելով բնական ռեսուրսների պահպանմանը և կյանքի որակի բարելավմանը:

Խնդրի դրվածքը և մեթոդիկայի հիմնավորումը: Բնական ռեսուրսների ծավալը սահմանափակ է, ուստի բնապահպանական և տնտեսական զարգացման տեսանկյունից կարևոր է դրանց օգտագործման էկոլոգիապես կայուն միջոցներ գտնելը: Տնտեսության գծային մոդելը չունի կայունության ներուժ, ի վիճակի չէ՝ ապահովելու բնակչության, ինչպես նաև շրջակա միջավայրի բարեկեցությունը և երկարաժամկետ հեռանկարում չի բավարարելու ժամանակակից հասարակության պահանջմունքները: Այդ իսկ պատճառով շրջանաձև տնտեսության նպատակն է ստեղծել արտադրության և սպառման շրջանաձև համակարգ՝ նվազագույնի հասցնելով թափոնների ծավալը: Ի լրումն շրջակա միջավայրի վրա ազդեցության նվազեցման՝ շրջանաձև տնտեսության սկզբունքների արդյունավետ իրականացումը հնարավորություն է տալիս բիզնեսին՝ բարձրացնելու

տնտեսական արդյունավետությունը, նվազեցնելու ծախսերը և բարելավելու կորպորատիվ իմիջը: Մրցունակության և կայուն տնտեսական աճի շահերից ելնելով՝ անցումը ռեսուրսների համար արդյունավետ շրջանաձև տնտեսության ենթադրում է [3, 4].

- վերամշակում,
- վերաօգտագործում,
- վերանորոգում:


Աշխատանքում ուսումնասիրվել է շրջանաձև տնտեսության կիրառման միջազգային փորձը տեսքտիլ և թեթև արդյունաբերության մեջ: Շրջանաձև տնտեսության մոդելը ներկայացված է նկ. 1-ում:

Տեսքտիլ թափոնների վերամշակումը հիմնականում ընթանում է 6 փուլով. թափոնների հավաքում, ըստ նպատակի տեսակավորում, մանրաթելերի մնացորդների վերամշակում, մանրաթելերի միավորման արդյունքում մանվածքի ստացում, մանվածքից՝ առանց ներկելու գործվածքի ստացում և գործվածքներից հագուստի, ինչպես նաև տարբեր տեսքտիլ իրերի ստացում: Աշխատանքում հետազոտվել է շրջանաձև տնտեսության մոդելը H&M բրենդի օրինակով: H&M-ը առաջին բրենդներից մեկն էր, որը 2013թ. գործարկեց հագուստի վերամշակման ծրագիր, և այդ ժամանակից ի վեր ստացվել է ավելի քան 172.700 տոննա տեսքտիլ: Սկզբունքը հետևյալն է. հաճախորդները կարող են թողնել իրենց անցանկալի իրերը H&M խանութների ցանկացած մասնաճյուղում: Աշխատակիցները պետք է տեսակավորեն դրանք ըստ մի շարք չափանիշների, որոնք սահմանված են ԵՄ թափոնների հիերարխիայում՝ կրկնակի օգտագործում, վերամշակում և էներգայի վերականգնում:



Նկ. 1. Շրջանաձև տնտեսության մոդելը տեսքտիլ և թեթև արդյունաբերության մեջ

Հետազոտության արդյունքները: Շրջանաձև տնտեսության մոդելը (նկ.1) կիրառվել է հազուստի արտադրությունում թափոններից տեքստիլ իրերի ստացման համար, որը նպաստելու է ոչ միայն էկոհամակարգերի պահպանմանը, այլև կյանքի որակի բարելավմանը: Սակայն տեքստիլ թափոնների վերամշակումն ունի իր հնարավորություններն ու մարտահրավերները (նկ. 2):




Նկ. 2. Տեքստիլ թափոնների վերամշակման հնարավորությունները և մարտահրավերները

Որպես հնարավորություն դիտարկվել է այն հանգամանքը, որ արտադրությունն իրականացվում է առանց վտանգավոր քիմիական նյութերի և ներկանյութերի, արտադրությունը կայուն է, այսինքն՝ թափոնները վերածվում են նոր տեքստիլ իրերի, և չի աղտոտվում շրջակա միջավայրը: Եվ ի վերջո, վերամշակումը նոր ուղղություն է, որը նպաստում է կանաչ արդյունաբերության զարգացմանը՝ խթանելով անթափոն արտադրությունը և վերամշակման տեխնոլոգիաների կիրառումը: Տեքստիլ թափոնների վերամշակման մարտահրավերներից են.


- Կարճ մանրաթելերը, որոնք ստացվում են մեխանիկական գործընթացների արդյունքում:
- Ոչ բոլոր արտադրողները կարող են աշխատել վերամշակված մանրաթելային մանվածքների և գործվածքների օգտագործմամբ:
- Չնայած գունային բազմազանությանը՝ անթափոն արտադրությունում բացակայում է ներկման գործընթացը, և ստացվում են թափոնների երանգավորման արդյունքում ստացված գունային երանգներով թելեր, հաջորդիվ՝ նաև տեքստիլ իրեր:

Հնարավոր մարտահրավերների լուծման տեսլականն ունի հետևյալ պատկերը (նկ. 3):



Նկ. 3. Հնարավոր մարտահրավերների հաղթահարման տեսլականը

Աշխատանքում արդյունքների վերլուծության համար հիմք են հանդիսացել H&M բրենդի տեղեկատվական բազայից ստացված տվյալները (նկ.4)[5]:



Նկ. 4. Վերամշակման արդյունքում ծախսերի կրճատումը

Այսպիսով, վերամշակված նյութերի օգտագործումը հնարավորություն է տալիս՝ նվազեցնելու տեքստիլի թափոնների ծավալը՝ կրկին օգտագործելով հին գործվածքը: Սակայն պետք է հաշվի առնել ևս մեկ հանգամանք փ վերամշակված բամբակյա շապիկները ավելի թանկ են՝ հաճախ 15-40 դոլար: Ավելի բարձր արժեքը պայմանավորված է մանրաթելերի հավաքման, տեսակավորման և վերամշակման լրացուցիչ գործընթացներով, ինչպես նաև արտադրության ավելի ցածր ծավալներով: Չնայած բարձր գնին, վերամշակված բամբակը զգալիորեն նվազեցնում է ջրի սպառումը և նվազագույնի է հասցնում շրջակա միջավայրի վրա ազդեցությունը, ինչը գրավիչ ընտրություն է համարվում «կանաչը» գնահատող սպառողների համար:

Եզրակացություններ: Ընդհանրացնելով հետազոտության արդյունքները՝ կարելի է նշել.

➤ Վերամշակված բամբակյա վերնաշապիկները, չնայած բարձր գնին, նվազեցնում են ջրի սպառումը (մինչև 1,2 լիտր մեկ շապիկի համար), նվազագույնի հասցնելով շրջակա միջավայրի վրա ազդեցությունը:

➤ Շրջանաձև տնտեսության մոդելի ներդրման արդյունքում նյութերի ծախսը կկրճատվի մոտավորապես 20-50%-ով, ջրի օգտագործումը՝ մինչև 90%-ով, էներգիայի սպառումը՝ 30-40%-ով, CO₂ արտանետումների ծավալը՝ 10-20%-ով, աղբավայրերից պակասած թափոնները՝ ~0,3-0,45 կգ-ով:

➤ Կանաչ տեխնոլոգիաների ներդրումը հնարավորություն է տալիս նվազեցնելու ձեռնարկությունների գործառնական ծախսերը, ինչպես նաև բնապահպանական ռիսկերը, ինչը կնպաստի տնտեսության կայուն զարգացմանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Егорова М.С.** Технологические изменения как необходимое условие перехода к «зеленой экономике» // Креативная экономика. - 2015.-Т. 9, № 3. - С. 297–312.
2. **Кричевский Г.** Зеленые и природоподобные технологии - основа устойчивого развития. Том 1: Прорывные технологии XXI века. -М.: LAP LAMBERT Academic Publishing, 2020. – 424 с.
3. <https://kliimaministerium.ee/ru/sfery-deyatelnosti/cirkulyarnaya-ekonomika>
4. https://papers.ssrn.com/sol3/papers.cfm?abstract_id=1980586
5. <https://hmgroup.com/sustainability/circularity-and-climate/recycling>

А.Р. ОГАННИСЯН, А.Р. КОСТАНДЯН, Н.К. МАНАСЯН

ЦИРКУЛЯРНАЯ ЭКОНОМИКА В КОНТЕКСТЕ ВНЕДРЕНИЯ ЗЕЛЕННЫХ ТЕХНОЛОГИЙ

Циркулярная экономика является важным инструментом внедрения зеленых технологий, которая направлена на многократное использование ресурсов и сокращение отходов. Как замкнутая система, циркулярная экономика применяет принцип рециклинга, оптимизируя использование природных ресурсов. Внедрение зеленых технологий способствует не только сохранению экосистем, но и созданию новых рабочих мест и повышению качества жизни. В работе рассматривается концептуальный вариант решения противоречий между основной целью предпринимательской деятельности: получение прибыли, экономия ресурсов и сохранение окружающей среды. Предлагается внедрить в Армении зелёные бизнес-модели, основанные на концепции циклической экономики. Реализация зелёных бизнес-моделей будет способствовать как экономическому росту, так и обеспечению экологической устойчивости, создавая новые возможности для предприятий.

Ключевые слова: циркулярная экономика, зеленые технологии, оптимизация, вызовы, возможности, снижение затрат.

A.R. HOVHANNISYAN, A.R. KOSTANDIAN, N.K. MANASYAN

CIRCULAR ECONOMY IN THE CONTEXT OF INVESTMENT OF GREEN TECHNOLOGIES

The circular economy is an important tool for the implementation of green technologies, which is aimed at the multiple use of resources and the reduction of waste. As a closed system, the circular economy applies the principle of recycling, optimizing the use of natural resources. The implementation of green technologies contributes not only to the preservation of ecosystems, but also to the creation of new jobs and the improvement of the quality of life. The work considers the conceptual version of the solution to the contradictions between the main goal of business activity: making a profit, saving resources, and preserving the environment. It is proposed to introduce green business models in Armenia based on the concept of a circular economy. The implementation of green business models will contribute to both economic growth and environmental sustainability, creating new opportunities for enterprises.

Keywords: circular economy, green technologies, optimization, challenges, opportunities, cost reduction.